ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՆՏԱՌԱՅԻՆ ԿՈՄԻՏԵ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

«10» «Դեկտեմբեր» 2022թ. ք.Երևան

ՀՐԱՄԱՆ N 61-Լ

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ ԵՎ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՈՒ ԱՆՏԱՌԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 18-Ի N 18-Լ ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առաջին փոխվարչապետի 2019 թվականի հունվարի 11-ի N 3-Ն որոշման 12-րդ կետի 4-րդ ենթակետը և շրջակա միջավայրի նախարարի 2018 թվականի հունիսի 22-ի N 172-Լ հրամանի 23-րդ կետի 11-րդ ենթակետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Սահմանել Անտառային կոմիտեի՝

1) գլխավոր քարտուղարի տեղակալի մասնագիտական գիտելիքների շրջանակը և աղբյուրները՝ համաձայն N1 հավելվածի.
2) անտառների և անտառային հողերի կառավարման վարչության մասնագիտական գիտելիքների շրջանակը և աղբյուրները՝ համաձայն N2 հավելվածի.
3) անտառների հաշվառման և կադաստրի վարման վարչության մասնագիտական գիտելիքների շրջանակը և աղբյուրները՝ համաձայն N3 հավելվածի.
4) ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչության մասնագիտական գիտելիքների շրջանակը և աղբյուրները՝ համաձայն N4 հավելվածի.
5) իրավաբանական վարչության մասնագիտական գիտելիքների շրջանակը և աղբյուրները՝ համաձայն N5 հավելվածի.
6) անձնակազմի կառավարման բաժնի մասնագիտական գիտելիքների շրջանակը և աղբյուրները՝ համաձայն N6 հավելվածի.
7) պայմանագրերով ստանձնած պարտավորությունների հսկողության վարչության մասնագիտական գիտելիքների շրջանակը և աղբյուրները՝ համաձայն N7 հավելվածի.

8) արտաքին կապերի բաժնի մասնագիտական գիտելիքների շրջանակը և աղբյուրները՝ համաձայն N8 հավելվածի.
9) գնումների բաժնի մասնագիտական գիտելիքների շրջանակը և աղբյուրները՝ համաձայն N9 հավելվածի.
10) ընդհանուր բաժնի մասնագիտական գիտելիքների շրջանակը և աղբյուրները՝ համաձայն N10 հավելվածի.
11) տնտեսական բաժնի մասնագիտական գիտելիքների շրջանակը և աղբյուրները՝ համաձայն N11 հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Անտառային կոմիտեի գլխավոր քարտուղարի 2019 թվականի ապրիլի 18-ի «Անտառային կոմիտեի քաղաքացիական ծառայության պաշտոնների բազային և մասնագիտական գիտելիքների շրջանակը սահմանելու մասին» N 18-Լ հրամանը:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

5/10/2022

X

Պաշտոնակատար՝ Подписано: SEINYAN EDUARD 1808750063 Է. Սեինյան

«10» «Դեկտեմբեր» 2022թ.
ք.Երևան